«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 162-Ն որոշման մեջ փոփոխություն և 2023 թվականի փետրվարի 9-ի N 166-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- 2023թ. N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 162-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական,

ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվող ատեստավորման կարգը և մարտական խնդիրների ու դրանց իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթների շրջանակը սահմանելու մասին» N 162-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. Ատեստավորման արդյունքներով «ենթակա չէ հաշվարկվելու հավելավճար» եզրակացությունը կայացվում է այն դեպքում, երբ ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճանների գնահատման արդյունքներով զինծառայողն առնվազն մեկ պատրաստության աստիճանից կամ մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից ստացել է «անբավարար» գնահատական: Ատեստավորման արդյունքներով «ենթակա է հաշվարկվելու հավելավճար» կամ «ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը» եզրակացությունը կայացվում է այն դեպքում, երբ ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճաններից ու մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից զինծառայողը ստացել է «բավարար» կամ «լավ» կամ «գերազանց» գնահատական: Ընդ որում, զինծառայողը՝

1) մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստային առաջադրանքների առնվազն 21 հարցի սխալ պատասխանելու դեպքում ստանում է «անբավարար», 30-ից մինչև 34-ը ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «բավարար», 35-ից մինչև 44-ը ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «լավ», իսկ 45 և ավելի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «գերազանց» գնահատական.

2) գնահատվում է «գերազանց»՝ եթե ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճաններից ու մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից ստացել է միայն «գերազանց» գնահատական.

3) գնահատվում է «լավ»՝ եթե ֆիզիկական կամ կրակային կամ շարային պատրաստության աստիճաններից կամ մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից թեկուզև մեկից ստացել է «լավ» գնահատական, իսկ մնացածներից ստացել է «գերազանց» գնահատական.

4) գնահատվում է «բավարար»՝ եթե ֆիզիկական կամ կրակային կամ շարային պատրաստության աստիճաններից կամ մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստավորումից թեկուզև մեկից ստացել է «բավարար» գնահատական, իսկ մնացածներից ստացել է «գերազանց» կամ «լավ» գնահատական:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ

զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարների չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 166-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 2-րդ կետի՝

ա. 3-րդ ենթակետում վերջակետը փոխարինել միջակետով,

բ. 3-րդ ենթակետից հետո լրացնել 4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) օրենքով սահմանված կամավոր կամ պարտադիր ատեստավորման հիման վրա սույն որոշմամբ նախատեսված համապատասխան չափով հավելավճար ստացող և օրենքով սահմանված դեպքերում իրականացված նոր ատեստավորման արդյունքներով զինծառայողի նկատմամբ «ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը» եզրակացություն կայացվելու պարագայում զինծառայողին շարունակվում է հաշվարկվել հավելավճար՝ իրականացված նոր ատեստավորման արդյունքներով ստացած գնահատականի համար սույն որոշմամբ նախատեսված չափով:».

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հարջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության

2023թ. « » -ի

N -Ն որոշման

«Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

փետրվարի 9-ի N 166-Ն որոշման

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ, ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

NN ը/կ	Զինվորական պաշտոնների խմբերը՝ ըստ խմբային համարակալման և զինծառայողների կազմերի		Հավելավճարների չ ըստ ատեստավորմ գնահատականների	
			գերազանց	լա
1.		Բարձրագույն սպայական	470,000	42
2.			470,000	42
3.	1		470,000	42
4.	2		470,000	42
5.	3		470,000	42
6.	4		470,000	42
7.	5		470,000	42
8.	39	Ավագ սպայական	470,000	42
9.	38		470,000	42
10.	37		470,000	42
11.	36		470,000	42
12.	35		470,000	42
13.	34		470,000	42
14.	33		470,000	42
15.	32		470,000	42
16.	31		470,000	42
17.	30		470,000	42
18.	29		470,000	42
19.	28		470,000	42
20.	27		470,000	42
21.	26		470,000	42
22.	25		470,000	42
23.	24		470,000	42
24.	23		470,000	42
25.	22		470,000	42
26.	21		470,000	42
27.	20		470,000	42
28.	19	Կրտսեր սպայական	470,000	42
29.	18		470,000	42
30.	17		470,000	42
31.	16		470,000	42
32.	15		470,000	42
33.	14		470,000	42
34.	13		470,000	42
35.	12		470,000	42
36.	11		470,000	42
37.	10		470,000	42
38.	9 / 5	Ավագ ենթասպայական	395,000	34
39.	9 / 4		395,000	34
40.	9 / 3		395,000	34
41.	9 / 2		395,000	34

42.	9 / 1		395,000	34
43.	8 / 6		395,000	34
44.	8 / 5		395,000	34
45.	8 / 4		395,000	34
46.	8 / 3		395,000	34
47.	8 / 2		395,000	34
48.	8 / 1		395,000	34
49.	7 / 3	Կրտսեր ենթասպայական	395,000	34
50.	7 / 2		395,000	34
51.	7 / 1		395,000	34
52.	6 / 5		395,000	34
53.	6 / 4		395,000	34
54.	6 / 3		395,000	34
55.	6 / 2		395,000	34
56.	6 / 1		395,000	34
57.	5 / 5		395,000	34
58.	5 / 4		395,000	34
59.	5 / 3		395,000	34
60.	5 / 2		395,000	34
61.	5 / 1		395,000	34
62.	4 / 4	Շարքային	395,000	34
63.	4 / 3		395,000	34
64.	4 / 2		395,000	34
65.	4 / 1		395,000	34
66.	3 / 6		395,000	34
67.	3 / 5		395,000	34
68.	3 / 4		395,000	34
69.	3 / 3		395,000	34
70.	3 / 2		395,000	34
71.	3 / 1		395,000	34

Հայաստանի Հանրապետության **Ա. Հարությունյան**

վարչապետի աշխատակազմի

ղեկավար